ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 02.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/33

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն Ս. Բալասանյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 03 Ա 053435),

քննելով «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/77» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 24.05.2021թ. ներկայացված (24.05.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/33 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. <u>«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Խաչպար» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 24.05.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

««Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ն բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/77» ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2021թ. մայիսի 18-ի թիվ

2 որոշմամբ, որի Հրավերի թվով 45 չափաբաժիններից «Խաչպար» ՍՊԸ-ն բողոքարկում է թիվ 9-րդ չափաբաժինը:

Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» Հավելված թիվ 1-ի «անվանումը» սյունակներում թիվ 8-րդ և 9-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների համար գրված է միևնույն՝ «Ծածկոց անգիոգրաֆիկ» անվանումը, որոնց «տեխնիկական բնութագիրը» սյունակներում ներառված պահանջները «Ծածկոց անգիոգրաֆիկ» անվանումով ապրանքի մասով փաստացի միևնույնն են, սակայն բողոքարկվող թիվ 9-րդ չափաբաժնի մասով ավելացված է Հրավերի թիվ 5-րդ և 41-րդ չափաբաժինների մասերով պահանջվող ապրանքների «Իդենֆլյատոր-Մեդֆլյատոր» անվանումը, ինչպես նաև այդ ապրանքների տեխնիկական բնութագրերին համարժեք տվյալները:

20.05.2021թ. «Խաչպար» ՍՊԸ-ն Պարզաբանման հարցով դիմել էր «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/77 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ առաջարկելով, որպեսզի Հրավերի թիվ 9-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրերը համապատասխանեցնեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի երկրորդ մասի պահանջներին՝ առանձին բնութագրեր ունեցող և առանձին գնման առարկաներ հանդիսացող «Ծածկոց անգիոգրաֆիկ» և «Ինդեֆլյատոր- մեդֆլյատոր» տարբեր անվանումներ ունեցող տարբեր ապրանքները գրելով առանձին չափաբաժիններով, կամ տալ հիմնավորումներ, որին ի պատասխան 21.05.2021թ. «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից տրված գրության մեջ ոչ մի նախադասությունը չի հանդիսանում մեր կողմից բարձրացված հարցերի պատասխան, իսկ որոշ բացատրություններ և «հիմնավորում» չեն համապատասխանում իրականությանը:

«Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի թիվ 46-րդ հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/77 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2021թ. մայիսի 18-ի թիվ 2 որոշմամբ հաստատված «Բժշկական պարագաների» ձեռքբերման նպատակով հայտարարված ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/77 ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը՝ Հրավերի թիվ 9-րդ չափաբաժնի մասով, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում Ձեզ՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ին ՎԲԿ-

ԳՀԱՊՁԲ-21/77» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունելու որոշում՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/77» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի թիվ 9-րդ չափաբաժնի մասով:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդված երկրորդ մասը սահմանում է, որ.

«2. Արգելվում է խմբավորել առանձին ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը»:

Որպես բողոքի փաստացի ապացույց, որ «Ծածկոց անգիոգրաֆիկ» և «Ինդեֆլյատոր-Մեդֆլատոր» անվանումներով ապրանքները հանդիսանում են առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաներ, ՀՀ բողոքներ քննող անձի ուշադրությունն եմ հրավիրում Պատվիրատուի կողմից Հրավերի թիվ 5-րդ և 41-րդ չափաբաժինների մասերով պահանջվող «Ինդեֆլյատոր-Մեդֆլատոր» անվանումներով, ինչպես նաև թիվ 8-րդ չափաբաժնի մասով պահանջվող «Ծածկոց անգիոգրաֆիկ» անվանումով ապրանքների վրա:

Այդ չափաբաժիններով պահանջվող ապրանքների անվումներն ու տեխնիկական բնութագրով պահանջվող տվյալները փաստացի նույնն են, ինչ-որ գրված է Հրավերի թիվ 9-րդ չափաբաժնի մասով «Ծածկոց անգիոգրաֆիկ» անվանումով ապրանքի և նրա տեխնիկական բնութագիրը սյունակում ներառված պահանջներում առկա համապատասխան տվյալները, ինչն ապացուցում է, որ գնահատող հանձնաժողովը մեկ չափաբաժնում է խմբավորել երկու տարբեր անվանումներ ունեցող տարբեր ապրանքներ, որոնք ունեն առանձին բնութագրեր և հանդիսանում են գնման տարբեր առարկաներ, դրանով իսկ թույլ տալով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների խախտում»:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/33 բողոքի քննության նպատակով 27.05.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել բողոքը:

2. <u>«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ն 2021 թ-ի մայիսի 18-ին հայտարարել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/77» ծածկագրով մրցույթ: Մայիսի 24-ին մրցույթի 9-րդ չափաբաժինը՝ «Անգիոգրաֆիկ ծածկոց» լրակազմի տեխնիկական բնութագիրը բողոքարկվել է Խաչպար ՍՊԸ-ի կողմից:

1. Կենտրոնի կողմից ներկայացրած 9-րդ չափաբաժնի՝ «Անգիոգրաֆիկ ծածկոց» լրակազմի տեխնիկական բնութագիրը կազմված է հաշվի առնելով ծառայությունների իրականացման համար անհրաժեշտ պահանջը: Բնութագիրը կազմվել է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի, որը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Նշենք նաև , որ Բժշկական տարբեր միջամտությունների ստերիլ հավաքածուները շուկայում ներկայացված են որպես բժշկական պարագաների առանձին ապրանքախումբ, տեսականի: Մեր բժշկական կենտրոնը կազմում է իր պահանջարկը և ներկայացնում սահմանված կարգով գնումների իրականացման: Գնումների օրենքի 25-րդ հոդվածի երկրորդ մասի վերաբերյալ Խաչպար ՍՊԸ-ի կողմից կատարած մեջբերման տրամաբանությամբ մեր կենտրոնը այսուհետ չպետք է կիրառի ու զարգացնի միջամտությունների ստերիլ հավաքածուների կիրառումը, քանի որ դրանք բաղկացած են տասնյակ պարագաներից, որոնք կարելի է գնել առանձին-առանձին: Միաժամանակ նշենք, որ առանձին-առանձին ձեռք բերած ապրանքների գինը ավելի է լրակազմից, նույնիսկ եթե անտեսենք առանձին ձեռք բերվող ապրանքների մատակարարումը, ուշացումները և այլն:

2. «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/77» ծածկագրով մրցույթի 9-րդ չափաբաժնով ներկայացրած «Անգիոգրաֆիկ ծածկոց» լրակազմում ներառված է «Ինդեֆլյատոր-Մեդֆլյատոր» անվանումը: Մրցույթին 5 և 41 չափաբաժիններով ներկայացված են տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող ապրանքներ՝ «Ինդեֆլյատոր-Մեդֆլյատոր» և «Ինդեֆլյատոր-Մեդֆլյատոր-հավաքածու»: Նշված ապրանքները օգտագործվում են երկու անոթ միաժամանակ ստենտավորելու ժամանակ, երբ անհրաժեշտություն է առաջանում լրացուցիչ «Ինդեֆլյասոր-Մեդֆլյատորի», որի արդյունքում լրացուցիչ «Անգիոգրաֆիկ ծածկոց» չի օգտագործվում: Հետևաբար հիվանդանոցի շահերից ելնելով ընկերությունը

ձեռք է բերում առանձին չափաբաժնով նաև «Ինդեֆլյատոր-Մեդֆլյատոր»: Սա չի նշանակում, որ լրակազմի մեջ ներառված բոլոր պարագաները պետք է ձեռք բերվեն առանձին-առանձին:

3. Վանաձորի բժշկական կենտրոն ՓԲԸ-ում 2020 թ-ի փետրվարի 10-ին կայացած ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/11 ծածկագրով «Անգիոգրաֆիկ ծածկոցի» ձեռքբերման մրցույթին, որտեղ տեխնիկական բնութագիրը նույնպես ներառում էր «Մեդֆլյատոր» Խաչպար ՍՊ ընկերությունը մասնակցել և հաղթել է, ինչը նշանակում է, որ այս ընկերությունը նույնպես ՀՀ բժշկական կենտորններին առաջարկում է նմանատիպ բաղկացուցիչով հավաքածուներ: Վերը ներկայացնում եմ Խաչպար ՍՊԸ-ի կողմից ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/11 ծածկագրով մրցույթին առաջարկած տեխնիկական բնութագիրը և առաջարկվող ապրանքի արտադրողները.

Հ/Հ	Անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը*
6	Ծածկոց անգիոգրաֆիկ	Ստերիլ, բաղկացած՝ հիվանդի ծածկոց 230x310սմ ներծծվող հատվածով, ֆեմորալ և ռադիալ կպչուն թափանցիկ թաղանթներով անցքերով, սեղանի ծածկոց 140x190սմ, բժշկի խալաթ պաշտպանիչ հատվածով XL չափի 2 հատ, ռեֆլեկտորի ծածկոց, ոտնակի ծածկոց, սեթ-երեք ծորականի կոնեկտոր բարձր ճնշման, նյութի, ինվազիվ ճնշման և ֆիզ. լուծույթի խողովակներով /ստերիլ փաթեթի մեջ/, որտեղ ներառված է նաև Լուեր Լոք ներարկիչ 12մլ հատուկ բռնակով, ախտորոշիչ-ուղղորդիչ լար 0.35մմx150սմ, տիպի, լուեր լոք ներարկիչ 20մլ -2հատ, 10մլ-2հատ, պունկցիոն պսեղ 18G - 7սմ, սրբիչներ թղթյա Կամ 40x50սմ - 8 հատ(5 հատ փակ /ստերիլ փաթեթ/ , 3 հատ բաց), ստերիլ թանզիվ 7.5x7. 5սմ - 20հատ(10 հատ փաանտերիլ/10հատ բաց), փայտիկով սպունգ, բռնակով նշտարի սայր ստերիլ, ստերիլ վիրաբուժական ձեռնոցներ 7.0 - 1 հատ, 7.5 - 2հատ. 8.0 - 2հատ, կպչուն Կամ հատվածով գործիքների կամ թափոնների 25x55-2 հատ, ներարկիչ ասեղով ինսուլինի 1մլ, 2մլ ասեղով Լուեր Սլիփ, 5մլ ասեղով Լուեր Սլիփ, թասիկ կլոր 500մլ, ուղղանկյուն 2500մլ, մեդֆլատոր 30 ատմոսֆեր-30cc. Y տիպի-կոնեկտոր զսպանակաձև / PUSH & CLICK/ տիպի փական-մեխանիզմով և 25սմ բարձր ճնշման խողովակով և 3 way stockpock-ով /ստերիլ փաթեթ/, ուղղորդիչ լարի ասեղ/ստերիլ, ուղղորդիչ լարի պտտման գործիք-տորքեր/ստերիլ: Կամ համարժեք Պիտանելիության ժամկետի առնվազն 2/3 առկայություն :	Goksel Kimya Kozmetik Medikal Tibbi Mazleme ve Urunleri Teks. Konf. Gida san. Tic. Ltd. Sti կամ TopMedical Inc. կամ Beijing Akso Healthcare Co. Ltd. Goksel Kimya Kozmetik Goksel Kimya Kozmetik Göksel Kimya Kozmetik M

* Նշենք նաև, որ Խաչպար ՍՊԸ-ի կողմից առաջարկվում էր 3 ընկերությունների կողմից արտադրված հավաքածու, ինչը նշանակում է, որ մեր բնութագիրը կազմված է համաձայն ՀՀ գնումների մասին օրենքի 12-րդ հոդվածի 2/1 կետի, այն է՝ Գնման

առարկայի բնութագրերը՝ պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար:

4. Վանաձորի «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/77» ծածկագրով մրցույթի 9-րդ չափաբաժնով ներկայացրած «Անգիոգրաֆիկ ծածկոց» լրակազմի բնութագիրը կազմված է

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն, այն է գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվալ գնումը,
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, այն է Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից դրանց հատկանիշները հնարավորինս ներառում ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 2/1 կետի, այն է՝ Գնման առարկայի բնութագրերը պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար:
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5 մասի համաձայն նշվել է «կամ համարժեք» բառը:

Ինչպես նշեցինք 9-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրի սահմանումը չի խախտում գնումների օրենսդրության որևէ պահանջ և պայմանավորված է բացառապես պատվիրատուի կարիքների համար համարժեք ապրանքի ձեռքբերմամբ:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ չբավարարել «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2021/33 բողոքի քննության նպատակով 27.05.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/33 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/33 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/77» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերով սահմանվել է 9-րդ չափաբաժնով նախատեսված «Ծածկոց անգիոգրաֆիկ» գնման առարկայի տեխնիկական բնութագիրը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի 24.05.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումը և գործով առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) ***<u>պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.</u>***

<u>2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.</u>

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է

ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝

1. Մրցակցային գնման ձևերի կիրառման ժամանակ առանձին բնութագրեր ունեցող գնումները մեկ գնման գործընթացի շրջանակներում կարող են բաժանվել չափաբաժինների: Արգելվում է՝

1) մեկ գնման առարկան բաժանել առանձին չափաբաժինների՝ մրցակցային գնման ձևի կիրառումից խուսափելու նպատակով.

2) փոփոխել պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների բնութագրերը:

2. ***<u>Արգելվում է խմբավորել առանձին բնութագրեր ունեցող գնման առարկաները մեկ չափաբաժնում, բացառությամբ այն դեպքերի, երբ պատվիրատուն հիմնավորում է նման խմբավորման անհրաժեշտությունը</u>***:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Այսպես, «Վանաձորի ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/77» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերով նախատեսված պայմանագրի նախագծի Հավելված N 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով (հետայսու՝ Տեխնիկական բնութագիր), 9-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալը.

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	տեխնիկական բնութագիրը
9	Ծածկոց անգիոգրաֆիկ	Անգիոպլաստիկ Փաթեթ-Ծածկոց- Նախատեսված Անոթների Ստենտավորման կամ Անգիոպլաստիկ Վիրահատությունների Համար Չափման Միավորի 1 Հատը=1 ՀԱՏ <<ՍՏԵՐԻԼ>> ԼՐԱԿԱԶՄԻ Մեկանգամյա օգտագործման ստերիլ ***անգիոպլաստիկ հավաքածու-լրակազմ***,որը բաղկացած է- հիվանդի ծածկոց 58գր/մ2 տրիֆլեքս PP28gr+PE6+PP24gr+-1 կտորից 220x310սմ 220x310սմ չափի, ներծծվող հատվածով, ֆեմորալ անցքերով 12սմ և ռադիալ անցքերով 9սմ կպչուն թաղանթներով, երկու կողմանի թափանցիկ պանելով;Բժշկի և ասիստենտի ստերիլ անթափանց հատվածով պաշտպանիչ խալաթ 2 հատ XL չափսի 2 պաշտխպանիչ շերտ և 43 գր/մ2 SMS, կարերը ուլտրասոնիք տեսակի ;Անգիոգրաֆի ռեֆլեկտորի ծածկոց – 2հատ; Մանիֆոլդ սեթ-երեք ծորականի կոնեկտոր բարձր ճնշման, կոնտրաստի և ֆիզ. Լուծույթի խողովակներով/ստերիլ փաթեթի մեջ/, որտեղ ներառված է նաև Լուեր Լոք ներարկիչ 12մլ հատուկ բռնակով/ստերիլ փաթեթի մեջ/;Ախտորոշիչ-ուղղորդիչ լար 150սմ, 0.35; J տիպի/ստերիլ փաթեթի մեջ/; լուեր լոք ներարկիչ 20մլ -2հատ/ստերիլ փաթեթի մեջ լուեր լոք ներարկիչ 10մլ-2հատ/ստերիլ փաթեթի մեջ/; Ոտնակի ծածկոց -1հատ; Պունկցիոն ասեղ սելդինգեր 18G – 7սմ/ստերիլ փաթեթի մեջ/; Սրբիչներ 40x50սմ - 8 հատ(5 հատ փակ, 3 հատ բաց); Պարագաների սեղանի ծածկոց 56գր/մ2 բիֆլեքս կտորից 140x190սմ; Ստեիլ թանձիֆ 7.5x7.5սմ – 20հատ (10 հատ փակ, 10հատ բաց); Փայտիկով սպունգ վիրահատական դաշտը մշակելու համար; Բռնակով նշտարի սայր /ստերիլ փաթեթի մեջ/; Թասիկ կլոր 500մլ; Թասիկ ուղանկյուն 2500մլ; ***Ինդեֆլյատոր-Մեդֆլատոր***- 30ատմ, 20մլ/cc, եռուղի-ծորակով - Մթում լուսավորվող էկրանով<<luminescent>> և 3 կողմանի ծորակը/ստերիլ փաթեթի մեջ/; Y/Վայ – կոնեկտոր զսպանակաձև սեղմակ փականով և 25սմ բարձր ճնշման խողովակով, ուղորդիչ լարի ասեղ, ուղորդիչ լարի պտտման գործիք-տորքեր/ստերիլ փաթեթի մեջ/; Տալկով ստերիլ վիրաբուժական ձեռնոցներ/ստերիլ փաթեթի մեջ/-7.0 –2 հատ; 7.5 – 2 հատ; 8.0 –1 հատ, ներարկիչ ասեղով ինսուլինի 1մլ/ստերիլ փաթեթի մեջ/; ներարկիչ 2մլ -ասեղով Լուեր Սլիփ/ստերիլ փաթեթի մեջ ներարկիչ 5մլ-ասեղով Լուեր Սլիփ/ստերիլ փաթեթի մեջ/; Կպչուն հատվածով գործիքների կամ թափոնների տոպրակ 25x55 -2 հատ : Ցանկացած մատակարարված խմբաքանակի համար EO, CE MARK կամ FDA և ISO 13485 որակի վկայականների առկայությունը պարտադիր է: Պետք է լինի նոր, չօգտագործված, գործարանային ստերիլ փաթեթավորմամբ Tyvek կամ համարժեք հիդերբագ <երկկողմանի թափանցիկությամբ> + էթիլեն Օքսիդի ինֆիկատոր նաև ներատված ապրանքների ինքնակպչուն ընդհանուր պիտակ որի ԲԱՐԿՈԴ և պիտնելիության ժամկետի հատվածը առանձնանում է 3 պլոկվող ինքնակչուն պիտակի գրանցամատյաններում և/կամ հիվանդության պատմագրերում: Ներառված բոլոր պարագաները պետք է լինեն ստերիլ,էթիլեն օգսիդի ստերլիզացիան ապացուցոց ինդիկատորով փաթեթ անջատ փաթեթավորումներով: Ներառի տեխնիկական ցուցանիշները, առանձնահատկությունները և օգտագործման կանոնները՝ գործարանային ձեռնարկի ձևով: Հանձնելու պահին պետք է ունենա ամբողջ պիտանելիության ժամկետի առնվազն 70%-ը : Չափման միավոր 1 հատը հավասար է 1 հատ ստերիլ լրակազմի:

Այսպիսով՝ Ընթացակարգի 9-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի՝ «Ծածկոց անգիոգրաֆիկ», Տեխնիկական բնութագրի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Պատվիրատուն Տեխնիկական բնութագրում «Ծածկոց անգիոգրաֆիկ» լրակազմում ներառել է նաև «Ինդեֆլյատոր-Մեդֆլատոր» գնման

առարկայի բնութագիրը, այսինքն՝ 9-րդ չափաբաժնում որպես մեկ գնման առարկա խմբավորել է երկու տարբեր բնութագրեր ունեցող ապրանքատեսակներ, արդյունքում՝ խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը, քանի որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է առանձին տեխնիկական բնութագրեր ունեցող գնման առարկաներին և տվյալ գնման գործընթացի շրջանակներում 9-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկաներն առանձին չափաբաժինների չտարանջատելը կհանգեցնի Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված պահանջների խախտման, այն է՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպման և գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների խախտման, որոնք գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից են:

Միևնույն ժամանակ, անդրադառնալով Պատվիրատուի կողմից բողոքի քննության շրջանակներում ներկայացված դիրքորոշմանը, հարկ եմ համարում արձանագրել, որ վերջինս ներկայացված դիրքորոշմամբ չի հիմնավորել իրարից տարբեր տեխնիկական բնութագրեր ունեցող գնման առարկաների մեկ չափաբաժնում խմբավորելու անհրաժեշտությունը:

Այսպիսով՝ վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված, գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման, ուստի Ընթացակարգը 9-րդ չափաբաժնի մասով պետք է հայտարարվի չկայացած:

Ընդ որում, հարկ եմ համարում արձանագրել, որ հետագայում 9-րդ չափաբաժնով նախատեսված գնման առարկայի ձեռքբերման նպատակով կազմակերպվելիք Ընթացակարգի հրավերը կազմելիս Պատվիրատուն պետք է հաշվի առնի, որ մեկ չափաբաժնում որպես մեկ գնման առարկա խմբավորված ապրանքատեսակները պետք է տրոհվեն առանձին չափաբաժինների, որը կնպաստի Ընթացակարգին մասնակիցների շրջանակի ընդլայնմանը և արհեստականորեն չի սահմանափակի վերջիններիս մասնակցությունը գնման ընթացակարգին, միևնույն ժամանակ մրցակցության հավասար պայմաններ կապահովի հնարավոր մասնակիցների համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 24.05.2021թ. ներկայացված բողոքը բավարարել.

Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին «ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/77» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը 9-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**